# Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի N 1321-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին

**Նախագիծ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

‘ ’ ----------- 2020 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ

22-Ի N 1321-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 34-րդ հոդվածի 1-ին մասով` Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի «Պայմանագրային զինծառայողին ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովելու դեպքում այլ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց դրամական փոխհատուցում

վճարելու կարգը և չափերը սահմանելու մասին» N 1321-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ լրացումները.

1) որոշումը լրացնել 2.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Պայմանագրային զինծառայողին փոխհատուցվում է նաև բնակելի տարածություն վարձակալության պայմանագրի նոտարական հաստատման և (կամ) իրավունքի պետական գրանցման համար պայմանագրային զինծառայողի կողմից վճարված գումարը:».

2) որոշման հավելվածում՝

ա. 9-րդ կետի 6-րդ ենթակետում «պատճենը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև բնակելի տարածություն վարձակալության պայմանագրի նոտարական հաստատման և (կամ) իրավունքի պետական գրանցման համար գումարի վճարումը հաստատող փաստաթղթի բնօրինակը».

բ. 12-րդ կետում լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն կետի համաձայն կատարվող առաջին վճարման հետ միաժամանակ շահառուի հաշվեհամարին փոխանցվում է նաև բնակելի տարածություն վարձակալության պայմանագրի նոտարական հաստատման և (կամ) իրավունքի պետական գրանցման համար շահառուի կողմից վճարված գումարը՝ վճարումը հաստատող փաստաթղթում նշված չափով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: